

ջինջ անելու, երբ հայերը ոչ մի պաշտպանութիւն չդառն Պարսիկ բերգապահներից և տեսան իրենց անտարակոյս փճացումը, դիմեցին իրենց զրացի քիւրդերին և խոստացան հաւասարիոն Ծինել և թէ պաշտպանութիւն, Մարզիցիք այլևս չդպան Պօմուրցոց և շարունակելով իրանց ընթացքը յարձակուեցան Խոյի վրայ, կոտորեցին Վառում եղած Պօմուրցիներից 50, և 7 էլ թուրք, թալանեցին թուրքարնակ մի քանի զիւղեր, Թեմակալ Առաջ. Փոխանորդը տակաւին բանակցութեան մէջ էր կառավարութեան հետ այս խնդրոց մասին, երբ մեկնեցաւ իր պաշտօնավայրից իսկ այժմ ինչպէս լսում ենք Պօմուրցիք կրօնը զոհել են բնակավայրի համար. Պօմուրցոց մի մասը դեռ թափառում են Խոյում և Վառում; Պօմուր թէկ Պարսից հող, բայց աւելի ենթարկուած է քրդական աղդեցութեան, Քանի որ հայերը չեն ուզում երկրի ներսը բնակուել՝ Պօմուրում ուրիշ կերպ չեն էլ կարող ապրել ներկայ պայմաններով:



թիւն ունի՞ զինուորական ծառայութեան համար. ուժաշափ մեքենայի օլաքով մենք ամենքս կարող ենք իմանալ, թէ մեր բազկի զօրութիւնը որչափ ծանրոց կարող է առնել: Բայց երբ որ հարկաւոր լինի իմանալ մեր հոգեկան զօրութեան աստիճանը, մեր բարոյական և մատուր վաստակի քանակութիւնը, մենք կը գժուարանանք զանել մի չափու որ անոր ցուցմանը ստուգենը մեր հոգեկան պիտանութեան արժեքը:

Հապա մեր հարցաքննութիւնները միթէ չեն նշանակում մի այդպիսի չափի գործածութիւն: Բայց գժուար չէ համոզուիլ որ հարցաքննութիւնների սովորութիւնը լոկ միայն մի խարուսիկ պատրանք է գտնուեմ: Վասն զի հարցաքննութիւնների միակ և զրիխաւոր նպատակ է գարձել՝ ստուգել այն ծանօթութիւնները, որ հարցաքննուողը արգեն ձեռք է բերել համապատասխան բաժնի մէջ: Քննիչները կարծում են, թէ այդպիսի ծանօթութիւնների ընդարձակութիւնից կարող են եղանակացնել և զաղափար սահանալ քննու: ոչի հոգեկան կարողութիւնների մասին: Սակայն փորձը միշտ հակառակն է հաստատել, միթէ կեանքի մէջ այն մարդիկ միշտ լու մշակ են հանդիսանում, որոնք հարցաքննութիւնների ժամանակ փառաւոր յաղթանակ են ստացել: Քանիսը գոցանից չեն կարողացել իրանց յիշողութեան մէջ ամբարտածները խորհրդով գործադրել քանիսի աշխատութիւնը կեանքի մէջ եղել է յեղյեղուկ, անփոյթ և թափուր գիմացկութիւնից: Մի խօսքով եթէ կարմիր սեղանի կշաբն հարցաքննութիւններով կարողանանք մասամբ թափանցել ուրիշի զիտութեան մէջ, անհնարին է գտնուեմ ձրշգութեամբ իմանալ թէ նոյն մարդու կարողութիւնն ու զրութը ինչ կը լինի Եւ որովհեան մարդու յաջողակութիւնը ճանաչելու համար այսպէս անօգուտ են հանդիսանում հարցաքննութիւնները, իսկ մի ուրիշ աւելի արգիւնաւոր հնար տակաւին չենք գտնել — զաւարձախօսի մէկը տակն է, թէ հարցաքննութիւնների փոխանակ տեղի լաւ է գործածել կշեռք և ծանրութեամբ իմանալ, թէ ովք կը լինի պիտանացու, զոր օր, ովք կարող է լինել լաւ բարեկամ կամ ընտիր սպասաւոր է եւ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՀՕԳԵԿՈՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ԴՐ. ԿՐԵՊԵԼԻՆԻ,

(Քաղաքածորեն թարգմանութեան)

Այժմեան մեքենաների զինաւոր յատկութիւններից մէկն էլ այն է, որ մենք միշտ կարող ենք կանխառ և անսխալ իմանալ իրանց զօրութեան և աշխատութեան չափը. մեքենան ճիշտ այնպէս է գործում ինչպէս որ ապահովեցրել է շինողը: Ասել են, թէ մարզուլ մեքենայ է, սակայն եթէ մենք շատ ու քիչ հաւանականութեամբ կարողանանք գուշակի, թէ այդ մեքենայի պահպանութեան համար որքան սնունդ հարկաւոր կը լինի, մեզ համար մինչեւ այսօր մութը խնդիր է մնում: թէ մարդկային մեքենան որշափ զործ կարող է կաստարել:

Զինուորական բժիշկը հարկաւ միշտ կարող է մի ակնարկով իմանալ, թէ իւր առաջ կանգնած երիտասարդը արգեք յարմարու-

իրօք մեծամեծ զժուարութիւններ կան հոգեկան ընդունակութիւնները չափելու համար։ Մենք երբէք չենք կարողանայ որոշել բանաստեղծական թռիչքի բարձրութիւնը կամ չափել հանձնարեղութիւնը լիտրներով և սումարներով։

Այսու ամենայնիւ մի հնար կայ շուտ և ամենայն զիւրութեամբ որոշել աւելի համեստ սահմանի հոգեկան գործողութեանց սասոյդ չափը, որ շատ անդամ մեր երկար անձնական ծանօթութիւնների փորձով իսկ չենք կարողանում իմանալ։ Թէ մարդս ամենապարզ հոգեկան գործերում որքան զօրութեամբ կարող է աշխատել, այս հեշտ է ճշգիւ չափել։ Այսակ չափ կը համարուի այն հանգամանքը, թէ մի մարդ որոշ ժամանակում քանի՞ հաս նոյնանման փոքրիկ խնդիրներ կարող է լուծել կամ կատարել։ Այսպիսի պարզ խնդիրներ են զոր օր, տառեր համարելը, ընթերցանութիւնը, թուերի կամ վանեկերի անզիր անելը, միանշան թուերի շարունակ գումարումը և այլն։ Ասոնցից իւրաքանչիւրը յատուկ նշանակութիւն ունի, բայց մենք պարզութեան համար բացառապէս միայն այն կը պարզենք, թէ միանշան թուերի գումարումը ինչ հետեւնքներ է առաջ բերում։

Փորձը այնպիսէ կատարվում, որ քննուող անձը տպագրուած տետրակի մէջ մէկմէկու տակ շարած թռանշանները անընդհան և երկար ժամանակ գումարում է։ Երբ որ գումարը հարիւրից բարձր անցնի, այնուհետեւ հարիւրաորները անուշագիր են թողնվում և գումարը շարունակվում է միայն միաւորների վերայ աւելացնելով նոր թռաւեր։ Ամէն մի հինգ րոպէից յետոյ հնում է զանդակի նշանը։ Այս լսելով փորձ անողը մի զիծ է գծում վերջին անդամ գումարած թռանշանի հշտին։ Փորձը աւարտուելուց յետոյ հեշտ կերպով կիմացուի, թէ աշխատազներից իւրաքանչիւրը ամէն մի հինգ րոպէում որքան թիւ է գումարել։

Այս կերպով երեան ելած իրողութիւններից առաջնն այն է, որ զանդան մարզիկ զանդան արագութեամբ են աշխատում։ Զօր օր 10 անձննքներից ամէնից զանդաղը իւրաքանչիւրը հինգ րոպէում գումարում էր

մոտաւորագէս 140 թիւ, իսկ ամէնից արագը՝ 384 թիւ։ Այս վերջինն ուրեմն  $2\frac{1}{2}$  անգամ աւելի էր զործ կատարում, քան առաջինը։ Սորա ամէնքը կրթութեամբ և հաստիով զրեթէ հաւասար էին, և ուրեմն միայն զումարելու ընդունակութեամբ տարրեր էին։ Ծատ հաւանական է, որ «փոյթ» գումարողը միշտ «սառյդ» գումարող չլինի, այնպէս որ յամենայն գէպս «արագութիւնը» տակաւին հոգւոյ կատարելութիւնը չպէտք է համարուի։

Ուրիշ պարզ զործերումն էլ կարելի է այսպէս գանել անձնական յատուկ յաջողակութիւնը, որով կը յայտնուի, որ մի անձի աշխատութեան արագութիւնը զանդան աստիճանով է երեսում, կատարվում զանդան շրջանների խնդիրներում։ Ով որ պատգ է գումարում, իցէ թէ զանդաղութեամբ անգիր սովորէ, և առհասարակ հակառակ համեմատութեամբ գործէ։

Որպէս զի մարդկանց ընդունակութիւնները այսպէս չափել կարողանանք, չողեաք է մոռանանք մի քանի շփոթող հանդամններ։ Զօր օր, ամէն մի հոգեկան ջանքի արգիւնքը խիստ փոփոխութիւն է կրում վարժութեան պատճառով։ Հենց մեր յիշատակած օրինակում կարող ենք նկատել թէ ամէն մի քայլից յետոյ գումարումը հետզհիտէ աւելի արագանում է։ Նախկին զանդաղը փոքր ինչ յետոյ կարող է հասնել շուտափոյթին կամ աւելի ևս հեռու գնալ նորանից։ Ուրեմն այլ ոյժ է անձնական յակութիւնը և այլ ոյժ է վարժութիւնը զործի արագութեան մէջ։

Սակայն վարժութեան կարողութիւնն էլ սահման ունի՝ որից յետոյ այլ ևս չի զօրանում։ Աշխատութեան շաբունակ կրկնութիւններից ծաղող արագութիւնը՝ զնալով սկսում է նուազել։ Նոյն պարոնների զործի արգիւնաւորութիւնը ածեց առաջին փորձից մինչեւ երկրորդը՝  $25\%$ , երկրորդից մինչեւ երրորդը՝  $15\%$ , երրորդից միշեւ չորրորդը՝  $6\%$ ։ Ազաւորեմն ամենայն մարդ շատ շուտ հասնում է, մի սահմանին, որից յետոյ արագութեան ածումը գագարում է, և վարժութեամբ այլ եւս չի աւելանում։ Այս կեափս յետոյ անձնաւորութիւնները գարձեալ կարող են իւրաքանչիւրը հիմն կերպում գումարում էր

ման արագութեան հիմնական եւ յատուկ տարբերութիւնները: Ի գեղ պէտք է ասել, որ վարժութեան աճումն էլ տարբեր ասահածանով է կատարվում զանազան մարդկանց մէջ—եթէ մէկի մէջ  $40\%$  է, միւսի մէջ մինչև  $25\%$ -ի է հասնում:

Վարժութեան մասին այս ևս նկատուել է, որ եթէ մէկը մի բաժնում յաջողակութիւն է ստանում, ուրիշ բաժններում ևս վարժուելով գործը արագացնում է: Գալով վարժութեան յարատելութեան եւ հասատութեան, յայտնի է, որ մի անդամ ձեռք բերած վարժութիւնը ամրողջ կենաց ընթացքում անկորուսա չի մնում, այլ չետզհետեւ անդադանում է: Այս փոփոխութիւնը զանազան մարդկանց մէջ զանազան արագութեամբ է կատարվում: այնպէս որ հաւասար աստիճանով վարժուած երկու մարդիկ՝ միեւնոյն ժամանակամիջոցում զանազան չափով տուժում են իրանց վարժութեան հմատութիւնը: Այսքան միայն յայտնի է, որ վարժութիւնը շատ կամաց կամաց է կորչում: Փորձը ցոյց է տալիս որ մի քանի ժամում ձեռք բերած դումութեան վարժութիւնը՝ ամիսներից յետո զեռ զարձեալ յայտնի կերպով ներդորում է:

Վարժութիւնից աճող աշխատելու ընդունակութիւնը մեծ ընդդիմութեան է հանդիպում աւելի ևս աճող յոգնութեան ներգործութեան կողմից: Յոդնութիւնից միշտ նուզում է աշխատութեան արդինաւորութիւնը: Հենց որ յոդնութիւնը ախրանում է, այն ժամանակ վարժութիւնը կորցնում է իւր զօրութիւնը և աշխատելու ընդունակութիւնն սկսում է, թուլանալ: Արդիօք երբ է առաջ զայթա այս ժամը, կախուած է ստացած վարժութեան աստիճանից, ապա մանաւանդ անձնական յատկութիւններից, վերջապէս պատահական հանգամանքներից:

Խիստ հաւաքքրբական պատիկը են ներկայացնում մարդկանց յոգնելու տրամադրութեան տարբերութիւնները: Առհասարակ իւրաքանչիւր մարդ յաջողակ գործելու համար իրան յատուկ ընթացք ունի, որ մինչև մի որոշ ակնողութեան լրանալը միշտ մի և նոյն կանոնականութիւնների է, արտայայտվում:

Մի կարգի մարդիկ հատ հատ փորձերի ժամանակ նախ ցուցանում են յաջողակ գործելու աճումն և միայն երկար ժամանակից յետոյ՝ նուազութիւն ունին: Միւս կարգի մարդկանց աշխատելու ընդունակութիւը հենց առաջին քառորդ ժամից սկսում է նուազիլ, հետեւապէս իրանց յոգնելու տրամադրութիւնը խիստ մեծ է: Այս երկու կարգի մէջ ամեն ասափի աստիճանաւորութիւններ ել կան, ուր իւրաքանչիւր մարդ՝ իւր բնութեան համեմատ միշտ մի եւ նոյն չափի կարողութեամբ է գործում: Ուրքան որ աւելի լինի յոգնելու տրամադրութիւնը, այնքան աւելի կարծ ժամանակով գործելու յաջողակութիւնը կը մնայ իւր բարձրութեան աստիճանի վերայ: և այնքան աւելի անխուսափելի կը լինի անոր նուազումը: Նոյն իսկ սկզբում աւելի արագ աշխատողը՝ եթէ արագ յոգնող է՝ գործի շարունակութեան ժամանակ յետ կը մնայ այնպիսի զանգաղից, որ սովոր է հաւասար կերպով աշխատելու, ել չենք ասում, թէ յոգնութեան պատճառով իւր զործն էլ կախի շարունակ վատանալ: Մանաւանդ շպետ է կարծել իրը թէ յոգնութիւնը միշտ աշխատելու արագութիւնից է ծագում: Ծնդհակառակ մարդիկ էլ կան, որոնք զանգոտ են զօրծում, բայց և շատ շուշ են յոգնում, և միւս կողմից ուրիշներն ել երկար ժամանակ և հաւասար ուժով մեծ յաջողութեամբ են զօրծում: Ուրեմն յոգնելու տրամադրութիւն աստիճանը ամեն մի մարդու հիմնական յատկութիւն է:

Ուրիշ երկրորդական յատկութիւններ ել կան, որոնք որ նոյնպէս շատ կամ քիչ ճրշգութեամբ կարող են չափուիր: Զոր օր յաջողակ գործելու պատկերը կարող ենք լրացնել՝ չափելով գործից շեղուելու կամ խոտորելու մարդու տրամադրութիւնը, այսինքն թէ իւր աշխատելու արագութիւնը ուշագրական կախում կատար է արտաքին և ներքին խանգարիչ աղդեցութիւններից, որոնք որ մարդուն ցրուեցնում են: Հարկաւ որ է միայն փորձերի ժամանակ ուշք զարձնել, թէ որ կարծ միջոցներում ինչ չափով անկանոն թիւներ են ծնանվում մարդու աշխատու-

թեան մէջ, մինչև անզամ՝ կարելի է դիտամամբ խանգարութեան առաջ բերել զբսից և նկատել, թէ աշխատութեան արագութիւնը ինչպէս է նուազում այդպիսի խանգարութեաների պատճառով, զոր օր, երբ որ մէկը հաշվում է, թող միւսը այդ ժամանակ երգէ կամ՝ զուարժալի բաներ պատմէ: Ապա կարելի է իւրաքանչիւր անձնաւորութեան աշխատանքի առաջականութիւնը իմանալ այսինքն թէ ինչ արագութեամբ վերանում են յոգնութեան կամ՝ ցրուածութեան ներգործութիւնները և զործը վերասին կանոնաւորվում է: Կարելի է չափել նմանապէս և հոգեկան զործողութեան կախումը. կերակոր սուանալուց քնի տեւողութիւնից, մարմնական պարուասութիւնից: Վերջապէս կարելի է չափել աշխատութեան արժէքի որակը արդ բարոր ուղղութեանց համեմատ կամ աւելի լաւ է տաել աշխատութեան արագութեան հետ միշտ հաշիւ առնել նաև աշխատութեան արդիւնարութիւնն ու արժէքը:

Պէտք է խօսավանել որ այս տեղեկութիւնները հասակաւորի բարդ կենաց նկատմամբ տակաւին մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ: Խակ մանուկի նորակազմ՝ հոգեկան վիճակը՝ ոչ միայն տեղի պարզ և պայծառ երեցիներ է հանգիստացնում: այլ և հնարաւորութիւնն է տալիս մեզ նորա զարգացման պայմանները ճանաչել, իսկ աեղն եկած ժամանակ՝ մեր ուղեցուածի պէս ևս ներգործել:

Այս տեղ առաջին խնդիրը կը լինի չափել մեր աշակերտների հոգեկան զօրութիւնը: Դպրոցը ամենայն որ որոշ քանակութեամբ մատոր աշխատութիւնն է պահանջում: իսկ մենք գես ևս չգիտենք: թէ արդեօք մանկան ուղեղը իրօք կարող է լրումն տալ այդ պահանջներին, առանց որ և է վնաս կրելու: Նաւը ծովի մէջ ենք ձգում, առանց մի փորձ անելու և հաւասարի ունենալու, թէ որչափ կարող է նոյնը զիմանալ մեծամեծ փորձանքներին: Այս տեղ մի լոյս ստանալու համար, նախ և առաջ պէտք է քննենք: թէ աշակերտների յոգնելու տրամադրութիւնը ինչպէս է արտացայտում:

Հասակաւորների աշխատութեան արագութիւնը (գումարելիս) սկսում է թուլանալ

արդէն առաջին ժամի վերջը կամ երկրորդ ժամի սկզբին: Խակ երկու տարեկան մանուկը՝ ուշադրութեան լարման արդէն մի քանի բոսկից յետոյ ցոյց է տալիս յողնութեան անկասկած նշաններ: Աշակերտաների յողնութեան մասին խիստ նշանաւոր փորձեր է կատարել վերեննայի մի ուսուցիչ: Նա 162 մանց և աղջիկ 11—13 տարեկան աշակերտաներին առաջարկեց պարզ գումարման և բազմապատկութեան խնդիրներ լուծել, այնպէս ընարութիւն էր արած: որ լուծումը պիտի տեսէր 10 բոսկի չափ ժամանակի: Ընդ ամենը չորս նուագ խնդիրներ աշխատելու եին լուծել, հինգ հինգ բոսկէ, հանգիստներով: որով ամրող գործը տեսէց 55 բոսկէ կամ՝ գորոցական սովորական ամրող ժամ: Փորձը այնպէս խելացի կերպով է կատարուել որ սցդ բանից ըստ ամենայնի վըստահելի եղակացութիւններ կարող ենք հանել:

Մեծ մասվ հետեանքն այն էր, որ աշխատութեան զօրութիւնն սկսեց զգալի կերպով ամեն փորձի ամեն մէկ նուագներում: ընդհանրապէս վերջին բաժնում՝ հաշուած թուերի շատութիւնը 40% ի չափ աւելացաւ: առաջին բաժնի համեմատութեամբ: Սակայն լաւ քննելուց յիտոյ երեսցաւ, թէ ոչ ամենայն աշակերտ հաւասար չափով է մասնակցել այս յառաջազիմութեան մէջ, այլ նոցանից 43% ը ժամի վախճանին սկսեց մերկացնել աշխատութեան թուլութիւն: Ուրեմն սցսեղ էլ յոգնելու տարրերութիւններ ենք նկատում: ինչ որ տեսանք հասակաւորների մէջ: 12 տարեկան մանուկների բաւական ստուար մասը չի կարողանում հաւաքացած ոյմերով մի 40 բոսկի չափ, երեք հանգիստներով ընդհատած՝ պարզ թուարանական հաշիւների գործ կատարել – առանց յողնութեան երեսցիթների:

Բայց արգիւնքը միայն այդ չէր: Վիենայի ուսուցիչը ըլլացաւ այն ևս իմանալ, թէ աշակերտաները որքան սլսալներ են անում և քանի անգամ են ստիպվում սրբազնելու որպէս զի գաղափար տայ: թէ իւրաքանչիւր նուագում գործը որ տատիճան լաւութեամբ է կատարվում: Նւ բացուեցաւ այն նշանաւոր երեսցիթը, թէ փորձի առաջին նուագից սկսած՝ սիսլիներն ու սրբազրութիւնները կանոնաւոր

կերպով և աւելի աստիճանով են աճում, քան աշխատութեան արագութիւնը՝ Եթէ աշխատութեան արագութիւնը՝ 40% ով աճած տեսանք, սրբագրութիւնները աճում են 162% ով, իսկ սիալները՝ 177% ով։ Այդ մասնութիւնը մէջ՝ երկրորդ նուռազից սկսած արգէն՝ երեցան յոգնութեան զգալի նշաններ, որոնք շատերի մէջ արտաքրուստ ծածկուած մնացին՝ հետզետէ շարունակ փարժութիւն ստանալու պատճառով։ Այս, կատարուած գործը թէպէտ բազմացել էր, բայց անոր արժէրը միշտ աւելի փատացել էր։

Մի ուրիշը քննել է ինը տարեկան մանուկների թէլազրութիւնը, որոնք 19 տող մօտ 2 ժամութիւն կին զրել։ Այս տեղ էլ հետզհետէ սիալներ սկսեցին աճել խիստ արագութեամբ։ իւրաքանչիւր 100 տասի վերաբերութեամբ անոնք սկսեցին աճել մօտ 0,9% -ից մինչև 6,4%։ Եւ զարմանալի կերպով յոգնութիւնը ազգու ներգործում էր զրաւոր լեզուի կանոնաւորութեան վերայ։

Արդէն այս հետազօտութիւններից անվիճելի է զառնում որ զպրոցները չափազանց պահանջներ են զնում։ քան ինչ որ կարող են կատարել աշակերտները։ Միջին հաշուազ Շուեդիայում տաս տարեկան մանուկները օրական մտաւորապէս աշխատում են 6½ ժամ։ 18 տարեկանները՝ 11 ժամ, բայց կան և այնպիսի 18 տարեկաններ՝ որ 14½ ժամ են աշխատում։

Դեռ մի օրհնութիւն պիտի համարուի որ սովորութիւն է զարձել կազզութուելու համար ժամանակաւոր հանգիստներ և զադարներ տալ աշակերտներին։ Փորձել են հասկաւորներին գումարման աշխատութիւն տալ այնպիս որ չորս կես ժամու աշխատութիւններն ընդհատուեին տաս տաս բովէ հանգիստներով։ Ուր երեցաւ այն զարմանալի իրողութիւնը, որ իւրաքանչիւր կազզութման հանգստից յետոյ՝ աշխատութիւնը շատ աւելի լիշտ չափազանց աշխատութիւնը ընդունելու ամենայն ուժով նույիրուած է լինում զբաղեցնող ինքը։ իսկ ուսումնաբաններում ընդունելու այն է—անուշաղլութիւնը։ Միայն փորձերի միջոցին, այն էս խիստ կարծ ժամանակով մարդու ուշագրաւթիւնը ամենայն ուժով նույիրուած է լինում զբաղեցնող ինքը։ իսկ ուսումնաբաններում ընդունելու այնպիս է կարգազրուած որբոլոր նստած ժամանակը բնաւ կատարեալ աշխատութեան ժամանակ չի գտնում։ ի՞նչ էր լիներ մեր աշակերտների հալլ, եթէ զպրոցական օրական 5 ժամում այնպիս ուշագրաւթեամբ զբաղուեին, ինչպիս որ մերը միշտակած վիճանայի ուսուցչի

մինչդեռ փարժութիւնը շարաթներով կամ նոյն իսկ ամիսներով անկորուստ է, մնում թայց որպէս զի հանգիստները խորհրդով կատարուին պէտք է ոչ միայն աւելի երկարանան, քան զպրոցների սովորութիւնն է, ոչ չարկաւոր է, որ աւելի կարծ միջոցներից յետոյ կրկնուին. և որքան որ ուսումնը աւելի երկար անէ այնքան էլ հանգիստները պէտք է համեմատարար շարունակ տան։

Մենք այժմ կարող ենք երեակայել թէ ինչ սարսափելի պատկեր պիտի ներկայացնե զպրոցական մանուկների գրութիւնը ուսման ժամանակ։ Եթէ 12 տարեկան աշակերտի հազիւ մի քառորդ ժամի պարզ աշխատութիւնը յոգնութեան առաջին նշաններ է առաջ ըերում ապա ուրեմն բազմաժամ ուսումնը թէպէտե կարծ հանգիստներով հանգերձ՝ շատ շուտ պէտք է արտազրէ լիակատար հօգեկան սպառում։ Այսաեղ ուշագրաւթեան լարումը խիստ երկար է տեսում հանգիստները խիստ կարծ են, և ուրիշն անհնարին է գործելու ուժի տոկութիւնը պահպանել։ Առաջին ժամի առաջին բաժնից յետոյ՝ աշակերտը անդադար յոգնութեան թմրութեան է ենթարկվում։ որով անընդունակ է զառնում իւր բնական զօրութիւններով ըմբռնել ու աման նիւթը։

Սակայն—կարիք չկայ ծածկելու— այս պատկերը խիստ խոսար նկարագրուեցաւ։ Պատկերը չենց այդպէս էլ կը լիներ, եթէ զպրոցը իրօք հանեկը իւր նպատակին ուր որ տեսն հետաներով ձգտում է հասնել։ Մեր նորաբույրով սերնդի բախտով՝ ընդունելու նուրան պարզելու է մի այնպիսի աւագանգութեան կափարիչ։ որի մեծ արժէքն ու կարեւորութիւնը զգուարին է լիովին ըմբռնելու և այն է—անուշաղլութիւնը։ Միայն փորձերի միջոցին, այն էս խիստ կարծ ժամանակով մարդու ուշագրաւթիւնը ամենայն ուժով նույիրուած է լինում զբաղեցնող ինքը։ իսկ ուսումնաբաններում ընդունելու այնպիս է կարգազրուած որբոլոր նստած ժամանակը բնաւ կատարեալ աշխատութեան ժամանակ չի գտնում։ ի՞նչ էր լիներ մեր աշակերտների հալլ, եթէ զպրոցական օրական 5 ժամում այնպիս ուշագրաւթեամբ զբաղուեին, ինչպիս որ մերը միշտակած վիճանայի ուսուցչի

աշակերտները փորձի համար լոկ միայն 55 րոպէ զբաղուեցան։ Խսկ եթէ, մեր աշակերտները հոգւով խսպառ չեն ծիւրվում և չեն վտանգ վում։ մենք պարտական ենք աւելի այն ուսմունքներին և ուսուցիչներին։ որոնք աշակերտներին օրհնարեր ասիթ են ատիխ, որ նոքա խրեանց ուշագրութեան սանձը թուրացնեն և մոռանան իրանց ուր գտնուածք։ Աշակերտները կարող են երկար նստել և լուս մնալ։ Բայց պէտք չէ, որ խարուենք, նոքա հենց որ յոդնեն, խսկոյն կաշխատեն հոգւով հանգստանուլ, այսինքն չշետեել ուսման ընթացքին։ Որով մի զարմանալի հետեւանքի ենք հասնում։ թէ արդի ուսման ձանրաբերձ ընդարձակութեան մէջ՝ աազտկալի ուսուցիչները խիստ բարերար գործ են կատարում։ Եթէ բոլոր ուսուցիչները իրանց ուսմունքները կենդանի աշխատ ժութեամբ աւանդէին, խեղճ աշխարտները յոդնելուց յետոյ ևս պէտք է իրանց զօրութիւնները լարեին և զդիտենք, թէ ինչ ողբալի հետեւանքների պիտի հասնէին։

Անուրանալի է, որ այժմ աշխատում են հոգեկան աշխատութիւնը մարմնական աշխատութիւններով հանգստացնել։ մարմնամարզութիւնը, շարժողութեան խաղերը, ձեռագործութիւնները, նոյն խսկ երգեցագութիւննու նկարչութիւնը՝ մի տեսակ փափոխութիւն են մտաւոր աշխատութեան համար։ Բայց սխալ է կարծել, իրը թէ մարմնական վարժութիւնները կատարեալ հանգստութիւն են։ Փորձը ցոյց է տալիս, որ հասակաւորների 1-2 ժամ պատոյաը զրօննելու համար՝ այն շափով է թուլացնում հոգեկան աշխատութեան ընդունակութիւնը, ինչպէս որ զոր օր, 1 ժամուայ գումարութիւնն է աղջում։ Յայնի է, որ մի ժամ աշխայք խաղից յետոյ՝ աշակերտները բաւական միջոց են պահանջում։ մինչեւ որ կարողանան ուշք ու միտք հոււաքել յաջորդ դասերը լսելու համար։

Յոզնութեան գլում ամենալաւ միջոցն է քունը։ Բայց քունը պէտք է խսր լինի, որպէս զի լարուած ուղեղը կատարեալ կերպով դադարեցնէ իւր աշխատութիւնը։ Ով որ պառկելուց յետոյ շուտ է քուն մտնում, այնպէս որ այդ ժամանակ դժուար է նորան զարթեցնել, նա առաւ օտեան ժամանակ կազ-

դուրուած կը լինի, իսկ ով որ ուշ է քուն մտնում։ Նա առաւօտը թմրած կը զարթնի և կես ոյժերով կը շարունակէ աշխատել։ Դիշերը երկաթութով հանապարհորդելուց յետոյ՝ ուրեմն անրաւարար քնից յիտոյ՝ հասակաւորների գումարելու արագութիւնը մի երրորդականի չափ պահանակում է։ Ով որ փորձի համար մի գիշեր արթուն միայն հետեւ չորս օր շարունակ կը մերկացնէ, այդ փորձի համար մի գիշերուայ սերտադութիւններից և գիշերուայ սերտադութիւններից, այդ յայտնի է։ Նոքա հազիւ թէ կիսով չափ քնում են, քանիչ որ իրանց բնութիւնն է պահանջում։ Հոգեւով ու մարմնով իրօք զարգանալու համար։

Ապա մեր զօրութիւնները շարունակ պահպանելու համար հարկաւոր է կերպակուր ստանալը։ Քունը կարող է գործարանների քայլքայում երկար ժամանակ գանգաղացնել ինչպէս զոր օր, կենցանեաց ձմեռուայ քունն է ապացուցանում։ բայց գալիս է մի ժամանակն իրը որ վերջապէս նոր մնունդ պէտք է ընդունել։ Աշխատող մարդու մէջ այդ կարելքը աւելի շուտ է զգացվում, քան հանգիստ մնացողի մէջ, և մանկահասակի մէջ աւելի շուտ, քան կատարեալ զարգացածի մէջ։ Մնունդը մարսելու համար ժամեր են անցնում, և այդ միջոցում հոգեկան գործելու կարողութիւնը խիստ նուազում է։

Այս բոլոր ասածներից նախ այն է հետեւում, որ մեր զպրոցների աշխատութեան ժամերը պէտք է կարծեցնել։ Աշակերտների ինքնարեր անուշագրութիւնը հերիք չէ, որ չափազանց նստական կեանքի վնասները մեղմանան։ Էլ չենք առում, թէ այդպէս առաջ տարած ուսումը ինքնին անսպուղ է մնում։ այլ երկար աշխատող մանուկների հիւանդութիւններն էլ սկսում են աճել, որոնք մեծ մասով ծածուկ և աննշմարելի են մնում, բայց ապագայի համար անէծք են դառնում։ Հիմա վճռապէս կարող ենք տաել թէ ոչ մի աշակերտ, ոչ մի հասակաւոր անզամ, հարշունի այնպէս երկար աշխատել կատարեալ ուշագրութեամբ, ինչչպս որ արդի ուսումը շատ կամ քիչ խստութեամբ պահանջում է,

Երբէք չպէտք է մոռանալ, թէ կազդուրուած ոյժերով մի կէս ժամ զբաղուիլը անհամամատ աւելի արժէք և արգիւնք կունենայ, քան կրկնապատկուած ժամանակում շարունակ յոզնութեամբ աշխատութիւնը: Մենք միշտ կարող ենք ուսման տեղութիւնը կարծեցնել և ընտանի պարապմունքները պահասացնել, եթէ աշակերտներին զբաղեցնենք միշտ միայն իրանց հոգեկան ոյժերի թարմութեան ժամանակ: Այսպէս հնարաւորութիւն կուտանք, որ աճող մանուկը անբռնազրու շարժուի բացօթեայ բնութեան մէջ, ազատօրէն խաղայ, իւր ընտրած և սիրած անձնական զբաղմունքներին նուիրուի ընկերների և հարազատների բարերար շրջանում ապրի: Այս կը լինի բարոյական զարգացումն, որ այժմ խիստ անփոյթ է թողնուած այն միակողմանի ուղղութեամբ, որով ձգուում են աշակերտների պլուխը լցնել ուսուցման նիւթերով:

Ընտաննեկան պարապմունքը այնպէս պէտք է շափուի, որ աշակերտը ժամանակ ունենայ լաւ ընթլու: Օրուայ աշխատութեան յոզնութիւնից յետոյ երեկոյեան զբաղմունքը նուազ արժէք ունի, որով քունը կորցնում է խորութիւն, և աշակերտը կիսատ կազմուրուած է զարթնում հիտեեալ օր աշխատելու համար: Այսինքն մենք նպաստում ենք շարունակ աճող յոզնութեան և հոգեկան ոյժերի միշտ և միշտ նուազման:

Մանրամասնութիւնները անյիշաատակ թողնելով բաւական է ասել, որ հենց ուսուցման ընթանուը նպաստակը սխալ ենք ծրագրել: Դպրոցների և ուսուցիչների միակ փոյթն այն է, որ աշակերտների մէջ նախ և առաջ տպաւորեն հասասատուն ծանօթութիւններին մեծ քանակութիւն: Յիմարարոյժները կարող են վկայել, թէ որքան պատանիներ, մանաւանդ որքան սովազայ վարժուհիները հիւանդանոցի զոհ են գաւանում այն հարցաքննութիւնների պատճառով, ուր որ պահանջու ել են զարհուրելի յիշողական յաջողութիւններ: Մինչդեռ էլ ասրակոյ չկայ, մի որ և է ուսմունքի մերենական սովացումը՝ առանց ներըն որոշման ոչ միայն անօգուտ և ապարդիւն է, այլ սովորապէս մի արգելը է հոգեկան բարձր զարգացման համար: Մեծ մասով

մարդիկ պարզ անդիր են ոսպորում և մանաւանդ երր որ լոկ բառական պատկերացումների վարժութիւններ են ստանում: Մերտելու ժամանակ մենք մեր մտքի տռաջ կենդանացնում ենք չիւսիսային Ամերիկայի նահանդները ոչ թէ իրանց փոխադարձ աշխարհագրական զիրքով, բնակիչների առանձնայակութիւններով, տնտեսական շահագործութեամբ, քաղսթական զրութեամբ, այլ միօրինակ կրկնում ենք բերանի մի քանի շարժումներու ինչպէս որ ուրիշ ամենայն ձեռական որչհսնաներ սովորելու ժամանակ ենք անում: Եւ որքան որ աւելի պնդանում է բառական յաջորդութիւնների շարքը այնքան աւելի անփութութեամբ մեր պատկերացումների աղերերուներն ու յարաբերութիւնները մթին են մնում: Բազմայօդ բեղմնաւոր իրական պատկերացումների փոխարեն՝ զործ ենք ածում աւելի զիւրագարձ բայց անբովանդակ բառական նշաններ, որով թէպէտ քիչ աշխատութեամբ, մարդկային զիտութեանց մեծամեծ ստհմաններ ենք կարում: Իր թէ երկաժուղու ծանապարհորդութիւն անելիս լինեինք, սակայն մենք իջնում ենք միայն կայտաններում, իսկ գտաւարի կազմակերպութիւնները մեր աշքից արագ արագ փախչում են, որպէս կառքի պատուհանից երեցած տեսարաններ: Թէ յիշողական զերազանցութիւնը հոգեկան բարձր կարողութեան նշան չէ, որոր ապացոյց է շատ ապուշների զարմանալի մտապահութիւնը: Խիստ մեծ միամասութիւն է, երբ որ կարծում են իր թէ խօսքերի, անունների, թուերի և ուրիշ այսպիսինների մերենական տիրանալը կրթութեան նշան է և ուրիշն ցանկալի բան է: Խսկ միթէ մեր բոլոր հարցաքննութիւնները անարժանապէս աւելի մեծ կարեւութիւն չեն տալիս յիշողութեան անպառը յնցոտիներին, քան այն ջանքին, որ ստուգուի թէ աշակերտը իրօր տիրացել է իւր ուսածներին և հասունդաղութիւն ունի:

Ուսման ժամանակը կարելի է կարծեցնել ոչ միայն մերժելով յիշողութեան մեթենական զործը, այլ և աշակերտներին խումբ խումբ բաժանելով իրանց աշխատելու կարտութեան համեմատ: Մանուկների մէջ ես յոզնելու

ապրերութիւններ կան. ինչ որ մի խումբ  
անվնաս կերպով տանէ, այն կարող է, միւս  
խմբի մէջ ոյժերի անտանելի լարում տռաջաւ-  
ցնել, ուր որ աշակերտական ձիրքեր նոյնպէս  
չեն պահանում: Ուրեմն ուսուցիչը ի հաշիւ  
պէտք է առնէ յագնող մանուկների ըմբռնողա-  
կան կարողութիւնը և այդ պատճառով չշատպի:

Քաղաքակարթութեան պահանջները շար-  
տացի են, զպորոցն էլ միշտ ձգտել է ըստ  
ամենայնի ընդունակի իւր պահանջները բայց  
շափը շափազանց անցի է, մասնկան աշխատու-  
թեան զօրութիւնը այլ ես այդ շափին չի  
համապատասխանում: Չի կարելի գիտու-  
թեան սերմերը սերմանել, անփոյթ թողնելով,  
թէ արդեօք դաշտը պատրաստ է թէ ոչ  
այդքանն ընկունելու: Այն մարդը շտառ չի  
հնձում, որ լիքը բռներով է ցանում, այլ  
նա, ով որ վարուցանի համար խնամով գետին  
է ընարսում, ով որ հողը զօրացնում է և  
անձրեի ու արեգակի ներգործութիւններին  
հաւատարիմ է մնում:

Այսուհետեւ մեր մանուկ սերնդեան  
մշակութիւնն ես՝ որ նոյնպէս մի ազնիւ եր-  
կիր է՝ աւելի բարերեր պիտի դառնայ: Յափըշ-  
տակութեան մշակութեան ժամանակները ան-  
ցի են. խոպանացած դաշտը շնորհազարդ  
այզեստան պիտի դառնայ: Դպրոցի խնդիրը  
այսուհետեւ խիստ ծանրացել է, բաւական չէ  
հարցնել թէ ինչպէս են ուսուցանում, այլ  
նաև թէ ինչպէս են սովորում:

Մ. Մ.



### ԶՈՅՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ (Lautlehre)

ՎՐԱՅԵՐԻՆ ՀԱՅԵՐԵԿԻՑ ՓՈԽԱՌԵԱԼ, ԲՈԱՆԵՐԻ

(Եարունակուրիմ և վերց) \*

Ա. Բ. Յ. Ա. Ե. Շ. Ա. Տ. Ա. Պ.

Քնթերցողները մինչև այսուդ նշանակուած  
վրացերէն օրինակներից արգէն տեսան թէ վրացե-

րէն բառերն անպատճառ մի ձայնաւորով են վեր-  
ջանում: որն անշեշտ մնում է. այդ ձայնաւորը  
դրեթէ միշտ ի է, ամէնից սովորական և յաճա-  
խադէպ տառը ոչ միայն վրացերէնում այլ և սրա  
միւս կովկասեան քոյր լեզուների մօտ: Օրինակ  
Լազերէնում կատարեալի վերջաւորութիւնը ի է, հար-  
ցականի վերջաւորութիւնը ի է, բայերի կրաւորականը  
շինուում է նմանապէս ինախագիրով: այնպէս որ բոլոր  
հարցական կատարեալ կրաւորականները բնականօրէն  
երեք ի ունին, բացի այն իւրից որ բառի արմատը  
ունենում է. օր. իրոնիի՝ լուացուեցար. իշարի՝  
գրուեցար, իսիդորի՝ լսեցի՞ր և լն:

Վրացերէնը երբեմն այսպիսի անշեշտ ի գնում  
է նաև բառերի սկիզբը. ինչ, յունարէնից ինչատի,  
պարսկերէնից իաւախիլի և լն. այսպէս և հայերէ-  
նից իավախի կամ ալտարի՝ աւար և իսպոխի կամ  
ապոխի՝ ապուխտ:

Զայնաւորով յանգող բառերը վերջատառ չեն  
ստանում: բայց շեշտը տեղափոխուում է նախորդ  
վանկի վերայ. օր. յարի, յերի, բարյի, սածնյել՝  
ծղանի, դննել և լն. նոյնպէս այ ոյ աւ յանգող բա-  
ռերը. օր. կարա, նուրիխ, խան սարա: Խակ եթէ բառը  
միավանկ է կամ միավանկի է վերածուում: շեշտը  
մնում է. օր. բնէ, կու, ըն՝ առու, շրու:

Այս պարագաներում քիչ անգամ՝ ձայնաւոր-  
ը վերայ աւելանում է նաև մի ուրիշ ձայնաւոր.  
օր. դիմա՝ գիհի, բալայ բայխի՝ թալիք, բախ՝  
թիք, ձիա, ձուա՝ ձձի, նոյնը վի հետ, բավի կամ  
բուի՝ բու, բուի կամ բուի՝ առու:

Այսպէս ուրեմն ձայնաւորը մնում է անփո-  
փախ. բացառութիւն են բազի՝ բազէ. ձուա՝ ձձի  
(թէն կայ ոմկ, միառ). թիլա՝ թեզի:

Բազաձայնայանգ բառերը բացի ի-ից երբեմն  
ստանում են նաև աւ ու իւ ու իրեւ վերջատառ.  
ու ունի միայն մաւան՝ ծիծ բառը. խէկ ունեն փու-  
ղի՝ փող? փունն՝ փին, ծիւ՝ ծիր, մատիան՝ մատեան,  
ունն՝ որմ (Սվանեթերէն որմ). ա և ո միասին ու-  
նեն հազիւ ութուն բառ. ուրեմն ընդամենը ամ-  
բողջ բառերի 1/10-ը:

Այս թուի առաջ ձագում է մի շատ կարևոր  
հարց.—երբ բառերի մեծագոյն մասը վերջատառ ի  
ունի ինչո՞ւ օրանք ունեն ուրիշ ձայնաւոր. արգեօք  
օրանք հայերէնի բունն են ներկայացնուում:

Եթէ մի կողմից նկատենք թէ վրացերէն փու-  
խառութիւններն ունին այնչափ հնութիւն, որ կա-  
րող են արգէն մինչեւ Բ. դար բարձրանալ,  
ինչպէս տեսանք վերը, միւս կողմից էլ եթէ նկա-  
տենք թէ վրացերէնը բառերի ձայրից ձայնաւորը  
չէ ջնջում, այլ որ և իցէ միջոցով պահպանում է  
այն (հմիմ, բնէ և ձիա, բուի), այն ժամանակ այս  
կասկան անհամական չի թուի. Եթէ վրացին  
իրօք հայի բերնից լսել է աւազանա, նսու, կայր,  
սունկու և լն, անշուշտ նա վերցրած կը լինի ճիշտ

\* Տիկ Արտաքա 1898 թ. համար է., կը. 309.